Գործ թիվ ԵԴ2/34980/02/23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

27.10.2023թ. ք. Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Գ.Մազմանյանս, ծանոթանալով «Էյէմ Շին» ՍՊ ընկերության ընդդեմ պատասխանող ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գլխավոր քարտուղար Հասմիկ Հակոբյանի՝ 19.09.2023թ. թիվ 113-Ա/3 հրամանն անվավեր ճանաչելու պահանջի մասին, հայցադիմումին,

Պ Ա Ր Զ Ե Ց

«Էյէմ Շին» ՍՊ ընկերությունը 20.10.2023թ. հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ պատասխանող ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գլխավոր քարտուղար Հասմիկ Հակոբյանի՝ 19.09.2023թ. թիվ 113-Ա/3 հրամանն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Հայցադիմումը մակագրվել է դատավոր Գ.Մազմանյանին՝ 20.10.2023թ.:

Հայցադիմումը հանձնվել է դատավոր Գ.Մազմանյանի աշխատակազմին՝ 24.10.2023թ.:

Ուսումնասիրելով հայցադիմումը և դրան կից փաստաթղթերը, գտնում եմ, որ հայցվորի կողմից հայցադիմումը ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 120-122-րդ հոդվածների պահանջներին համապատասխան, հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր չկան:

Գործի արդյունավետ քննությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ է գործը նախապատրաստել դատաքննության:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 199-200-րդ, 234.6-րդ, 234.9-րդ հոդվածներով՝ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

Հայցադիմումն ընդունել վարույթ:

Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և բողոքարկման ենթակա չէ:

ԴԱՏԱՎՈՐ Գ. ՄԱԶՄԱՆՅԱՆ